	«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝

Առարկան՝ Հայոց լեզու, գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Միրան Ստեփանյան

Ուսումնական հաստատություն՝ Արևշատի միջն. դպրոց

Երևան 2022

Նախաբան

- **Ի՞նչ գիտես առակի ժանրի մասին, քանի՞ մասից է այն բաղկացած:**

Առակը բարոյախրատական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ քննադատվում կամ ծաղրվում են մարդկային արատավոր բնավորության գծերը մեծամտության, չաուության, ագահության և այլն: Այն բաղկացած է սյուժեից և բարոյախոսությունից:

- **Ի՞նչ առակագիրներ գիտես, համառոտ ներկայացրու:**

Առաջին համաշխարհային ամենահայտնի առակագիրը հույն Եզոպոսն է: Հայ առակագիրներից նշանավոր են Վարդան Այգեկցին, Մխիթար Գորշը: Առակներ գրել են նաև Խաչատուր Աբովյանը, Խնկո Ապերը, Ավետիք Իսահակյանը և այլն:

- **Ինչպե՞ս են գրվել ու կազմվել Սողոմոնի <<Առակներ>>-ը:**

Սողոմոն Իմաստունը ուշադիր զննում էր, թե ինչ էր տեղի ունենում նրա շուրջը, որպեսզի գրի առներ իր առակներում, որոնք անհրաժեշտ կլինեին նաև ապագայում:

- **Առակի գաղափարը:**

Պապու մասին առակում ակնհայտ է, որ հիմքում ընկած է հետևյալ գաղափարը՝ արա՛ այն, ինչ կուզեիր քեզ անեին: Երկու կանաց ապակում ներկայացվում է մարական սերն ու հոգատարությունը: 10 կույսերի մասին առակի ենթատեքստում ընկած է այն միտքը, որ երկնային թագավորություն մտնելու և Աստծու գոհացնելու համար հարկավոր է ժամանակին լսել նրա խոսքը և լինել իմաստուն:

- **Ի՞նչ են մեզ սովորեցնում առակները և նրանց դաստիարակչական նշանակությունը**

Նրանք մեզ սովորեցնում են լսել Աստծու խոսքը, լինել բարի, անկեղծ և հոգատար: Ես համամիտ եմ այն մտքի հետ, որ պետք է լինել կարեկցող, հոգատար, անկեղծ և լսել Աստծու խոսքը: Առարկաները լավն էին, բայց ինչպե՞ս է ստացվում, որ Աստված ասում է, որ չարին բարությամբ հաղթենք, սակայն այգու մշակների մասին պատմող առակում չարաչար սպանում է: Ստացվում է

իրոք հարկավոր է որոշ փորձերից հետո մարդուն պատասխանել ըստ արժանվույն:

Աստվածաշնչյան առակները

Այրի կնոջ և դատարի առակը

Առակը սովորեցնում է, որ անդադար ու անձանձրույթ պետք է աղոթել Աստծուն, ով անտարակույս կլսի իրեն դիմողի աղոթքների ու աղաչանքները այլ ոչ թե անիրավ և անաստված դատավորին, ով լսեց այրի կնոջը միայն նրա համար, որ վերջինս արդեն ձանձրացնում է իրեն:

Այրին Քրիստոսին թողած՝ ապավինում էր անիրավ դատավորին՝ իրավունք էր խնդրում մեկ այլ գնից, որպեսզի ձերբազատվի մեկ այլ անիրավի բռնությունից:

Անիրավ տանտեսի առակը



Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի:

Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են։ Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա։ Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի։ Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը։ Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի։ Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր։ Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:

Реклама
ПОЖАЛОВАТЬСЯ НА ЭТО ОБЪЯВЛЕНИЕ

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Առակների նպատակը

<



Կարծում եմ, նա այդպես է իրականացնում մարդկանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է. *«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի…*

Ուշագրավ է, որ Աստծու ներշնչմամբ գրված այդ խոսքերը սաղմոսերգուն ասել էր Հիսուսի ծնվելուց դարեր առաջ: Ստացվում է, որ իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր, որ նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը:

Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց

մեջ՝ մղելով նրանց լսելու։ Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ։

Ժայռի վրա կառուցել տունը

<



Ժայռը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ինչ-որ կառուցել ես, վաղ թե ուշ փլվելու է:

Մենք պետք է իմաստուն լինենք, եւ մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն՝ ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել:

Պետք է Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող:

Հավատի լույսը

<

Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել , որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: *Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի*: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում է հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն

իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որն շատ անգամ խափուսիկ է:

Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում

<

Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարիր են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Սերմնացանի առակը

<

Սերմնացանը Քրիստոս է, սերմը՝ Աստծո խոսքը, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը՝ ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը, ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն՝ պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից: Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է:

Առաջին տիպի մարդիկ դրանք այն մարդիկ են, որոնց միտքը կարծր հողի նման չոր է: Երբ կարդում կամ լսում են Տիրոջ խոսքը անտարբերության արտաքին շերտը չի թողնում, որ հոգևոր սերմը թափանցի սրտի մեջ, և այն մնում է հիշողության մակերեսին և չար ուժերը՝ աշխարհի զվարճանքներն ու գայթակղությունները, թռչունների նման մարդկանցից հափշտակում են Տիրոջ խոսքը:

Երկրորդն այն մարդիկ են, ովքեր լսելով Ավետարանի քարոզը սիրո, արդարության, ինքնազոհության մասին, անմիջապես բորբոքվում են լուցկու նման, բայց անմիջապես հանգում: Քարքարոտ տեղում միայն մանր խոտ է աճում, այդպես էլ այս մարդիկ հանդարտ կյանքի պայմաններում ընդունակ են կատարել ջանքեր չպահանջող մանր շատ գործեր: Նրանք դեմ չեն առաքինությանը,

բարոյականությանը, սակայն կկամենային Երկնքի արքայություն մտնել առանց բարդությունների: Իսկ երբ համոզմունքների համար ստիպված տանջանքներ ու զրկանքներ են կրում, անմիջապես ուրանում են Տիրոջը: Եսասիրության քարքարոտ շերտը չի թողնում, որ Աստծո խոսքը հասնի ու արմատավորվի նրանց սրտում:

Երրորդն այն մարդիկ են, ովքեր կամենում են միաժամանակ ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային Նրանք պիտանի չեն Աստծո արքայության համար, քանի որ կամենում են ապրել ըստ Աստծո օրենքների, բայց միաժամանակ չեն ցանկանում հրաժարվել աշխարհի ունայնությունից: Ի վերջո, աշխարհիկ հոգսերի, հետաքրքրությունների և հակումների հորձանուտը կլանում է նրանց իսպառ՝ հոգու միջից արտամղելով այն ամենն, ինչ լուսավոր է, խորհրդավոր և վեհ:

Չորրորդն այն կատարյալ մարդիկ են, ում խոսքը գործից չի տարբերվում, ովքեր Աստծո խոսքը լսելով և ընդունելով՝ փորձում են ապրել աստվածահաճո կյանքով: Ճիշտ է, բոլորը միանման չեն կարողանում ավետարանական խոսքին հնազանդվել, քանզի մեկը պտղաբերում է երեսուն, մյուսը՝ վաթսուն, մյուսը՝ հարյուր, որը նշանակում է, թե մեկն ի վիճակի է կատարել մեկ երրորդն այն ամենի, ինչ իրենից պահանջում է քրիստոնեական հավատը, մյուսը՝ մոտավորապես երկու երրորդը, և միայն քչերին է հաջողվում կատարել ամեն ինչ լիարժեք և կատարելապես: Դրանք ընտրյալ անհատականություններն են:

Պահված զանձի օրինակը

<



Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է , որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Նոր կարկատանը հին հագուստի վրա

Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ որ ´´*Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում*´´ առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝

նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Ճրագի օրինակը

<

-

Կարծում եմ ճրագը դա քրիստոնեությունն է, որը չէր կարող երկար ժամանակ ծածուկ մնալ ու գաղտնի գործել, միայն թե այդ լույսը համարձակ դուրս բերող էր պետք:

Որոմի առակը

<

-

Ագարակատերը դա Հիսուսն է , իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Աշակերտ լինելու գինը

Մարդկայնի կյանքը դա աշտարակի կառուցման նման է, որի հիմքը մարդու սերն է: Հիսուսին հետևելու իմաստը՝ փրկությունն է, որի համար անհրաժեշտ է սիրել Աստծուն ամբողջ հոգով ու մտքով: Եվ Հիսուսին հետևելուց առաջ մարդը պետք է հաշվի նստի ինքն իր հետ և հասկանա այն գինը, որ պիտի վճարի՝ հիսուսին աշակերտ լինելու համար:

Անպետք աղը

<

-

Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը: ՛՛Եթե աղը անհամանա՛՛ ասելով նա ի նկատի ուներ այն մարդկանց, ովքեր մեկ անգամ ճաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ հաղորդությունը, այնուհետև ընկան աններելի մեղքի մեջ և նրանք այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն ոչնչով հոգեպես նորոգվել:

Реклама

Առակը բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին հիմնականում գրվել չափածո: Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ *առակի բարոյախոսությունն է:*

Առակի վարպետներ են Եզովպոսը, Ֆեդրոսը, Ժան HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A8_%D4%BC%D5%A1%D6%86%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A8_%D4%BC%D5%A1%D6%86%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6"դը HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A8_%D4%BC%D5%A1%D6%86%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6" HYPERLINK

"https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A8_%D4%BC%D5%A1%D6%86%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6"Լաֆոնտենը, Իվան HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%BE%D5%A1%D5%B6_%D4%BF%D5%BC%D5%AB%D5%AC%D5%B8%D5%BE" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%BE%D5%A1%D5%B6_%D4%BF%D5%BC%D5%AB%D5%AC%D5%B8%D5%BE"Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80_%D4%B3%D5%B8%D5%B7" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80_%D4%B3%D5%B8%D5%B7"Գոշը, Վարդան HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6_%D4%B1%D5%B5%D5%A3%D5%A5%D5%AF%D6%81%D5%AB" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6_%D4%B1%D5%B5%D5%A3%D5%A5%D5%AF%D6%81%D5%AB"Այգեկցին, Խնկո HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B6%D5%AF%D5%B8_%D4%B1%D5%BA%D5%A5%D6%80" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B6%D5%AF%D5%B8_%D4%B1%D5%BA%D5%A5%D6%80"Ապերը:

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից:

Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը:

Advertisements
REPORT THIS AD

XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները: Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է : Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ:Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80_%D

5%84%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BD%D5%BF%D6%80%D5%B8%D5%BD" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80_%D5%84%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BD%D5%BF%D6%80%D5%B8%D5%BD"Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ։ Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար:

Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու զրույցներ։ Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով։ Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը։ Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն։ Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված *Սողոմոնի առակները*, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա։ Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է։ Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը։ Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%AB%D5%AF%D5%A1%D6%80_%D4%BB%D5%B4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B6" HYPERLINK "https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%AB%D5%AF%D5%A1%D6%80_%D4%BB%D5%B4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B6"Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները:

Սողոմոնը պատանի հասակում թագավոր է դառնում։ Նա հետևում էր իր հոր՝ Դավթի տված իմաստուն խորհուրդներին։ Եհովան հավանում է նրան ու մի գիշեր երազի մեջ հարցնում է. «Սողոմո՛ն, ի՞նչ կուզեիր ինձանից ստանալ»: Ի պատասխան՝ Սողոմոնն ասում է. «Ո՛վ իմ Աստված, ես շատ երիտասարդ եմ ու երկիր կառավարել չգիտեմ։ Ուստի, տո՛ւր ինձ իմաստություն, որպեսզի քո ժողովրդին ճիշտ ձևով առաջնորդեմ»: Աստծուն դուր է գալիս Սողոմոնի խնդրանքը։ Հետևաբար, նա ասում է. «Քանի որ դու իմաստություն խնդրեցիր ու ոչ թե երկար կյանք կամ հարստություն, ապա դու կլինես այնքան իմաստուն, որքան աշխարհում դեռ ոչ մի մարդ չի եղել։ Բայց դրա հետ մեկտեղ ես քեզ կտամ նաև այն, ինչ որ չխնդրեցիր՝ թե՛ հարստություն և թե՛ փառք»: Երբ Սողոմոնը՝ Դավթի որդին, մ.թ.ա. 1037թ.-ին դարձավ Իսրայելի թագավոր, *«երեք հազար առակ գրեց»: Նրա իմաստուն խոսքերի որոշ մասն արձանագրվեց Աստվածաշնչի «Առակներ» գրքում։ Այս առակներում հավիտենական ճշմարտություն է ամփոփված։ Դրանք այսօր նույնպես ժամանակահարմար են:*

Սողոմոնի իշխանության տարիները նպաստավոր ժամանակաշրջան էին : Այդ ժամանակ Իսրայելի թագավորությունն իր ծաղկման գագաթնակետին էր գտնվում : Այնուամենայնիվ, մարդիկ անձնական խնդիրներ ու դժվարություններ ունեին, որոնց պատճառը մարդկային անկատարությունն էր։ Ուստի զարմանալի չէ, որ իր խնդիրները լուծելու համար ժողովուրդը դիմում էր իմաստուն Սողոմոն թագավորին։ Բազմաթիվ հարցերի առնչությամբ վճիռներ կայացնելիս նա առակներ էր ասում, որոնք վերաբերում էին առօրյա կյանքի տարբեր ոլորտներին։ Այդ կարճ, բայց դիպուկ առածները շատ բարձր էին գնահատում նրանք, ովքեր ցանկանում էին իրենց կյանքը ներդաշնակեցնել Աստծու կամքին։

Աստվածաշունչը չի ասում, թե Սողոմոնն է գրել *«Առակներ» գիրքը։ Այնուամենայնիվ, նշում է, որ նա* «խոսեց» *առակներ, նաև՝ «նա ամեն ինչ մանրակրկիտ քննում էր, որպեսզի բազում առակներ շարադրի»՝ այդպիսով ցույց տալով, որ թագավորն ուզում էր, որ դրանք պահպանվեին ապագայի համա։ Դավթի և Սողոմոնի օրերում պալատական պաշտոնյաների մեջ կային նաև քարտուղարներ, ովքեր և կառավարչի խոսքերը խոր հարգանքով էին ընդունում ու գրի առնում դրանք։ Գրքի մեծ մասը, անկասկած, գրվել է Սողոմոնի իշխանության տարիներին (մ.թ.ա. 1037–998թթ.): Եբրայերեն Աստվածաշնչերում «Առակներ»-ը սկզբում անվանվում էր գրքի առաջին խոսքով՝* միշլեհ, *որը նշանակում է «առակներ»:* Միշլեհ *բառը եբրայերեն* մաշալ *գոյականի հոգնակի ձևն է, որը ակներևաբար ծագում է*

«նման լինել» կամ «համեմատելի լինել» նշանակությունն ունեցող բառի արմատից: Այս ձևակերպումները ճշգրտորեն բնութագրում են գրքի բովանդակությունը, քանի որ առակները սեղմ ասացվածքներ են, որոնք հաճախ նմանություններ կամ համեմատություններ են, և դրանց նպատակը ունկնդրին մտածելու տեղիք տալն է: Սեղմ կառուցվածքը հեշտացնում է առակների ընկալումը, դրանք դարձնում է հետաքրքիր: Բացի այդ, կարճ առակները հեշտ է սովորել ու հիշել: Առակի հիմնական միտքը չի մոռացվում:

Եզրակացություն

Առակը փոքրածավալ ստեղծագործություն է, որը խրատական բովանդակություն ունի: Այն իրական կյանքը և մարդկանց ներկայացնում է այլաբանորեն, այսինքն՝ անուղղակի ձևով: Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի, տարբեր առակների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց բացասական ու դրական գծերով:
Առակները ներկայացվում են մարդկային տարբեր բնավորություններ, ծաղրվում զանազան արատներ՝ ծուլությունը, ստախոսությունը, չարությունը, պարծենկոտությունը, ագահությունը, ժլատությունը և այլն, և այլն:
Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերը ու նշանակությունը եղել է, մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը: Առակները ազդեցության մեծ ուժ ունեն, քանի որ նյութական ձևի վերածված պատկերը մտքի վրա ավելի մեծ տպավորություն է գործում, քան վերացական գաղափարը:
Առակներն ունկնդիրներին ստիպում և պարտադրում են հետաքրքրվել,մտածել, ինքնուրույն եզրակացություններ անել: Հիսուս Քրիստոսն իր առաքելությունն ու վարդապետությունը բացատրելու համար բազմաթիվ առակներ են պատմում: Այդ առակներում նա իրեն հաճախ համեմատում էր լույսի, ճանապարհի, սերմնացանի, որդատունկի, տանուտերի հետ և այլն:Ահա թէ ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը

Գրականություն

1.Առակներ-Հոգևոր կայքի էջ

Ter-hambardzum.mat

2.Աստվածաշնչյան առակներ

3.Աստվածաշնչյան ընկերություն գրքից

4.Աստվածաշունչ-Վիքիքաղաք

Աստվածաշունչ և Առակներ

Qahana.am

5. <<Քրիստոնեության իսկությունը>> Սուրբ Էջմիածին 2017

Ադամ Քահանա Մակարյան